ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«30» 07 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 396-Հ

«ՍԻԲԻՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ 2021 թվականի հուլիսի 22-ի և հուլիսի 28-ի հայտերը և 2021 թվականի հուլիսի 22-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Մոսկվա/UUDD/-Երևան/UDYZ/-Սամարա/UWWW/-Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/-Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/-Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/ երթուղով՝ 2021 թվականի օգոստոսի 4-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Սամարա/UWWW/-Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/-Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/-Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/

երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Կրասնոդար/URKK/-Երևան/UDYZ/-Կրասնոդար/URKK/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Սոչի/URSS/-Երևան/UDYZ/-Սոչի/URSS/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ և Դոնի Ռոստով/URRP/-Երևան/UDYZ/-Դոնի Ռոստով/URRP/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում 2021 թվականի օգոստոսի 4-ից մինչև 2021 թվականի հոտեմբերի 28-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/, Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/, Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/ երթուղիներով և (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ՝ Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/, Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/, Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/ երթուղիներով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերությունը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և սույն կետում նշված Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/, Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/, Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/ երթուղիներով մեկնող ուղևորներին տրամադրվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնությունը:

3. Սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի օգոստոսի 4-ը՝ 36 ամսով: Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) 2022 թվականի ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ ավիաընկերության ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

7/30/2021

X

ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN GALUST 1607790106 ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 230/300721
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 230/300721
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ PJSC «Siberia «Airlines»
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	Airbus 319, Airbus 320, Airbus 320N, Airbus 321, Airbus 321N, Boeing 738, Embraer ERJ170-100LR
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air route	Մոսկվա/UUDD/-Երևան/UDYZ/-Սամարա/UWWW/-Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/-Երևան/UDYZ/-Բելգորոդ/UUOB/-Երևան/UDYZ/-Աստրախան/URWA/ Moscow/UUDD/-Yerevan/UDYZ/-Samara/UWWW/-Yerevan/UDYZ/-Saratov/UWSG/-Yerevan/UDYZ/-Belgorod/UUOB/-Yerevan/UDYZ/-Astrakhan/URWA/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	04/08/2021 մինչև 28/10/2021 04/08/2021 till 28/10/2021

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ACTING CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
GALUST POGHOSYAN

Recognizable signature

X

ԳԱԼՈՒՍՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN GALUST 1607790106

30.07.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)